



Հայաստանի Հանրապետության
Կեդրոնական ընտրական
յանձնաժողով

Ազգային ժողովի ընտրություններ

7 յունիս 2026

Յարգելի՛ ընտրող,

2026 թուականի յունիս 7-ին տեղի պիտի ունենան Ազգային ժողովի հերթական ընտրութիւն:

Ազգային ժողովի ընտրութիւններու ատեն ընտրելու իրաւունք ունին ընտրութեան օրը 18 տարեկանը բոլորած Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները:

Տեղամասային կեդրոնները բաց պիտի ըլլան Ձեր առջեւ առաւօտեան ժամը 08:00-էն մինչեւ երեկոյեան 20:00-ն:

Քուէարկութեան պէտք է մասնակցիք անձամբ, քանի որ լիազօրուած քուէարկութիւնը արգիլուած է:

Ձեր ընտրական տեղամասը գտնելու համար կրնաք Ձեր տուեալները որոնել Կեդրոնական ընտրական յանձնաժողովի կայքին վրայ՝



Կայք. elections.am/Register



Հեռաձայն. 010 54 53 59

Քուէարկութեան սենեակ մտնելու ատեն պէտք է մօտենաք արհեստագիտական սարքաւորումը սպասարկող մասնագէտին:

Դուք պէտք է անոր ներկայացնէք Ձեր անձը հաստատող փաստաթուղթը:

Անձը հաստատող փաստաթուղթ կը համարուին՝



Անձնաթուղթը,



Ոչ կենսաչափական անցագիրը,



Կենսաչափական անցագիրը,



անցագիրին կամ անձնաթուղթին փոխարինող ժամանակաւոր փաստաթուղթը՝ տրուած լիազօր մարմինի կողմէ:

Եթէ Ձեր անձը հաստատող փաստաթուղթի վաւերականութեան ժամկէտը լրացած է, ատիկա հիմք չէ Ձեզ քուէարկութենէն զրկելու համար, բացի այն պարագայէն, երբ պարզուի, որ ունիք վաւերականութեան ժամկէտը չլրացած անձը հաստատող այլ փաստաթուղթ:

Մասնագէտը պիտի ստուգէ Ձեր ինքնութիւնը՝ ներկայացուած փաստաթուղթին մէջի լուսանկարին հիման վրայ եւ

վաստաթուղթը պիտի մուտքագրէ արհեստագիտական սարքաւորման մէջ, որմէ ետք պիտի յայտնէ արդիւնքին մասին:

Եթէ գրանցուած էք այդ տեղամասին մէջ եւ ունիք քուէարկելու իրաւունք, մասնագէտը Ձեզմէ պիտի խնդրէ արհեստագիտական սարքաւորման համապատասխան հատուածին մէջ մուտքագրել Ձեր մատնահետքը:

Մատնահետքը մուտքագրելէ ետք արհեստագիտական սարքաւորումը պիտի տպէ քուէարկութեան կտրօնը, որ մասնագէտը պիտի տրամադրէ Ձեզի:



Ուշադրութի՛ւն.

Կտրօնը պահեցէք Ձեր քով մինչեւ վերջ:

Եթէ ունիք ֆիզիքական խնդիրներ, որոնց պատճառաւ չէք կրնար մատնահետք մուտքագրել, մասնագէտը համապատասխան նշում կը կատարէ եւ Ձեզի կը տրամադրէ կտրօն:

Եթէ Ձեր անձը հաստատող որեւէ փաստաթուղթով արդէն իսկ մասնակցած էք քուէարկութեան, պաստառին վրայ կը յայտնուի կարմիր նշան մը՝ զուգորդուած ձայնային ազդանշանով, եւ անմիջապէս կը հրաւիրուին ոստիկանութեան ծառայողները:

Եթէ ընտրողը շփոթած է ընտրական տեղամասը եւ գրանցուած չէ տուեալ ընտրական տեղամասի ընտրողներու ցուցակին վրայ, ապա պաստառին վրայ կը յայտնուի դեղին նշան մը, եւ ընտրողը դուրս կը հրաւիրուի:

Արհեստագիտական սարքաւորումէն տպուած կտրօնը ստանալէ ետք, Դուք պէտք է մօտենաք յանձնաժողովի այն անդամին, որ պատասխանատու է ընտրողներու ցուցակին եւ անոր փոխանցէք սարքաւորումէն ստացած Ձեր կտրօնը:

Յանձնաժողովի անդամը պիտի առնէ կտրօնը, ընտրողներու ցուցակէն պիտի գտնէ Ձեր անունը, մականունը: Դուք պիտի ստորագրէք Ձեր տուեալներուն դիմաց, որմէ ետք յանձնաժողովի անդամը իր անհատական կնիքը պիտի դնէ Ձեր ստորագրութեան դիմաց եւ կտրօնին վրայ:

Եթէ չէք կրնար ինքնուրոյն ստորագրել ընտրողներու ցուցակին վրայ, ապա իրաւունք ունիք դիմելու այլ քաղաքացիի մը օգնութեան՝ բացառութեամբ ընտրական յանձնաժողովի անդամներուն:

Օգնող անձը կը ստորագրէ Ձեր փոխարէն:

Գրանցուել է ետք դուք պետք է մտնենաք քուէաթերթիկներ յատկացնող յանձնաժողովի անդամին ու ներկայացնէք քուէարկութեան կտրօնը: Յանձնաժողովի անդամը պիտի տրամադրէ ընտրութիւններուն մասնակցող բոլոր կուսակցութիւններու եւ կուսակցութիւններու դաշինքներու մէկական քուէաթերթիկները եւ քուէարկութեան մէկ պահարան:

Քուէաթերթիկները առնելէ ետք Դուք կ'անցնիք քուէարկութեան սենեակ:



Ուշադրութի՛ւն.

Դուք չէք կրնար հրաժարիլ բոլոր քուէաթերթիկները ստանալէ:

Ինչպե՞ս քուէարկել քուէարկութեան սենեակէն ներս



Ուշադրութի՛ւն.

Յիշեցէ՛ք, որ քուէարկութիւնը գաղտնի է:

Բաց քուէարկութիւնը արգիլուած է:

Քուէարկութեան սենեակէն ներս գտնուելու ատեն Դուք կը կատարէք Ձեր ընտրութիւնը:

Քուէաթերթիկներէն կ'ընտրէք Ձեր նախընտրած կուսակցութեան կամ կուսակցութիւններու դաշինքի քուէաթերթիկը եւ առանց ծալելու կը դնէք քուէարկութեան պահարանին մէջ :

Չօգտագործուած քուէաթերթիկները կը նետէք քուէարկութեան սենեակին մէջ տեղադրուած առանձին սնտուկին մէջ:

Քուէարկութեան սենեակէն ներս գրիչ չէ տեղադրուած:
Քուէաթերթիկին վրայ որեւէ նշում պէտք չէ կատարել:

Եթե կը կարծէք, որ քուէաթերթիկը վնասած էք, ապա կրնաք
դիմել յանձնաժողովի նախագահին՝ նոր քուէաթերթիկներ
ստանալու խնդրանքով:

Ինչպե՞ս քուէարկել ուրիշ անձի մը օգնութեամբ

Եթէ հաշմանդամութիւն ունիք եւ կը դժուարանաք ինքնուրոյն քուէարկել, ապա յանձնաժողովի նախագահին տեղեկացնելէ ետք իրաւունք ունիք քուէարկութեան սենեակ հրաւիրելու ուրիշ անձ մը, ով չի կրնար ըլլալ ընտրական յանձնաժողովի անդամ, վստահուած անձ, դիտորդ, լրատուական միջոցներու ներկայացուցիչ կամ այցելու:

Օգնողը, նախքան Ձեզի քուէարկութեան սենեակէն ներս օգնելը, պէտք է անպայման գրանցուի:

Քուէարկութեան սենեակէն ներս գտնուելու ատեն՝ օգնող անձը պէտք է օգնէ Ձեզի ընտրելու համապատասխան քուէաթերթիկը:



Ուշադրութի՛ն.

Կտրօնը չմոռնա՛ք քուէարկութեան սենեակին մէջ:

Ի՞նչ պետք է ընել քուէատուփին քով

Քուէարկութեան սենեակէն ելլելէ ետք պետք է մօտենաք քուէատուփին քով գտնուող յանձնաժողովի անդամին:

Ձեր ձեռքը պետք է ըլլայ քուէարկութեան կտրօնը եւ քուէարկութեան գոց պահարանը:

Պահարանին անկիւններէն մէկը կտրուածք ունի, սակայն այդ կտրուածքէն կարելի չէ հասկնալ, թէ որո՞ւն քուէարկած էք:

Կտրօնը կու տաք յանձնաժողովի անդամին:

Յանձնաժողովի անդամը, առանց Ձեր ձեռքէն քուէարկութեան պահարանը առնելու, քուէարկութեան պահարանի կտրուածքին մէջէն քուէաթերթիկին վրայ կը փակցնէ ինքնաստսնծուող դրոշմանիշը:

Դրոշմանիշը փակցնելէ ետք յանձնաժողովի անդամը կը բանայ քուէատուփին ճեղքը եւ դուր կը նետէք պահարանը:

Եթէ քուէարկութեան կտրօնը չներկայացնէք, ապա Ձեր քուէարկութեան պահարանը յանձնաժողովի նախագահը կ'առնէ եւ անմիջապէս կը մարէ՝ առանց պահարանին պարունակութիւնը ստուգելու:

Քուէարկելէ ետք դուք պետք է հեռանաք տեղամասային կեդրոնէն:



Ուշադրութի՛ւն.

Դուք իրաւունք չունիք տեղամասային կեդրոնէն ներս ունէ մէկուն յայտնելու, թէ որո՛ւն քուէարկած էք:

Որո՞ւն դիմել հարցերու կամ խնդիրներու պարագային

Եթէ քու էարկութեան ընթացքին յառաջացած են արհեստագիտական խնդիրներ կամ խախտուած են Ձեր իրաւունքները, կրնաք կապ հաստատել հետեւեալ կառոյցներուն հետ.

1. Կեդրոնական ընտրական յանձնաժողով

Քու էարկութեան կարգի, տեղամասային կեդրոնէն ներս որեւէ իրավիճակի առնչուող հարցերով, ինչպէս նաեւ այն պարագային, երբ չէք գիտեր՝ ո՛ր դիմել:

Թէժ գիծ՝

- 010 54 53 59,
- 010 56 31 05,
- 010 56 31 06:

2. Տեղաշարժի եւ քաղաքացիութեան ծառայութիւն

Եթէ Ձեր անձը հաստատող փաստաթուղթը (անցագիր կամ անձնաթուղթ) վնասուած է, ժամկէտանց է, կորսուած է կամ Ձեր տուեալները չկան կամ սխալ են ընտրողներու ցուցակին վրայ:

Թէժ գիծ՝ 84 22:

3. Մարդկային իրաւանց պաշտպանի աշխատակազմ

Եթէ կը սեպէք, որ ընտրական տեղամասին մէջ Ձեր ընտրելու իրաւունքը խախտուած է կամ Ձեզի հանդէպ անհաւասար վերաբերմունք ցուցաբերուած է:

Թէժ գիծ՝ 096 11 61 00:

4. Ոստիկանութիւն

Ընտրական իրաւախախտումներու, կաշառքի կամ Ձեր կամքի ազատ արտայայտուելու հանդէպ ճնշումներու պարագային:

Թէժ գիծ՝ 112: